ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7

ք. Երևան «09» մարտի 2020 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս.Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աութսորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի եվ իրականացման համար անհրաժեշտ աջակցության (խորհրդատվություն, ուսուցում, գործարար ծրագրի մշակում եվ դրանց իրականացման ուղեկցում) ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր -գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարել ու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 5 580 000 (Հինգ միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի 7.15 կետում նշված համաձայնագրին կից վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին՝ ֆինանսական միջոցների տրամադրման համար սահմանված եռամսյակային համամասնություններին համապատասխան: Ծառայության դիմաց վճարումները կատարվելու են խմբերի հաշվարկով փաստացի կազմակերպված դասընթացների համար: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմ անագրի N հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պ այմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պ այմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանվ ած ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ

աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական	«Աութսորս» ՍՊԸ
հարցերի նախարարություն,	ք.Երևան,Սարմենի 1, 2/1
ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՎՀՀ 02639627
ՀՎՀՀ՝ 02536701	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 163007079839
Հ/Հ՝ 900011024990	Գլխավոր տնօրեն՝
Գլխավոր քարտուղարի	Ա.Սարգսյան
պարտականությունները կատարող	
Ս. Մաչյան	
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«09» մարտի 2020թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության						
Չ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	80531100/501	աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվության, ուսուցման, գործարար ծրագրի մշակման ծառայության տրամադրումը	հատ	2929500	75	ք. Երևան և ՀՀ մարզեր	*Մատուցվող ծառայությունների նկարագրի 2.2; 2.3 և 3-րդ կետերով սահման ված ժամկետներում*
		Բիզնես ծրագրի իրականացման ուղեկցում	հատ	2650500	50		:

*** Ծառայության մատուցման ժամկետը չի կարող ավել լինել, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:**
*** Ծառայությունները մատուցվում են ՀՀ ԱՍՀՆ զբաղվածության պետական գործակալության կարիքների համար:**

ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

1. Գնման առարկան է՝

1.1 Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի՝ առ նվազն 75, աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության՝ խորհրդատվության, ուսուցման, գործարար ծրագրի մշակման ծառայության տրամադրումը և թվով 50 բիզնես ծրագրերի իրականացման ուղեկցում:

2. Ծառայության մատուցումը.

2.1 Պայմանագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը մշակում և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության (այսուհետև՝ գործակալություն) պետի համաձայնությանն է ներկայացնում ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման, ուսուցման իրականացման ծրագիրը և գործարար ծրագրի օրինակելի ձևը:

Ուսուցման ծրագրի իրականացման ընթացքում անմրցունակ անձանց պետք է տրամադրվեն գիտելիքներ շուկայի պահանջարկին համապատասխան գործարար ծրագրեր մշակելու, ձեռնարկատիրական գործունեության իրականացման նպատակով պետական գրանցում ստանալու, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու, այդ թվում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկային պարտավորությունները կատարելու վերաբերյալ:

Գործարար ծրագրում պետք է ներառվեն հետևյալ բաժինները. ամփոփագիր, մարկետինգի պլան, գործունեության

կազմակերպման և կառավարման պլան, արտադրական պլան, ֆինանսական պլան:

2.2 Գործակալությունից յուրաքանչյուր ամիս անմրցունակ անձանց ցուցակը ըստ տարածքների ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությունը կատարում է անմրցունակ անձանց ընտրություն՝ հիմք ընդունելով նրանց ձեռնարկատիրական գործունեության իրական հնարավորություններն ու կարողությունը: Կազմում և գործակալության պետին է ներկայացնում ծրագրի իրականացման ժամանակացույցը և պատասխանատուների տվյալները՝ ըստ տարածքների:

2.3 Անձանց ընտրելուց հետո ցուցակներում նշված տարածքներում 5 աշխատանքային օրվա ընթացքում սկսում է ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ խորհրդատվության տրամադրման և ուսուցման իրականացման գործընթացը՝ առնվազն 20 աշխատանքային օր տևողությամբ և վերջնական արդյունքում՝ հաշվի առնելով տեղի շուկայի առանձնահատկությունները, աջակցում է կոնկրետ տարածքում իրականացման ենթակա գործարար ծրագրի մշակմանը:

Ունկնդրի ուսուցումը կազմակերպվում է հայտը ներկայացրած զբաղվածության համապատասխան տարածքային կենտրոնի գտնվելու վայրում:

Ցուցակում ընդգրկված անմրցունակ անձանց թվի նվազման դեպքում կազմակերպությունը կարող է դիմել գործակալություն լրացուցիչ ցուցակ ներկայացնելու առաջարկով:

Սույն կետով սահմանված ամբողջ ուսուցման ծառայությունների մատուցումն իրականացվում է մինչև 2020 թ-ի դեկտեմբերի 20-ը:

2.4 Ստեղծում է գնահատման հանձնաժողով, հանձնաժողովի կազմում ներառելով նաև զբաղվածության պետական գործակալության կամ տարածքային կենտրոնների ներկայացուցիչներին:

2.5 Յուրաքանչյուր ուսուցման ծրագրի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում գնահատման հանձնաժողովը քննարկում է կազմակերպության գործուն աջակցությամբ աշխատաշուկայում անմրցունակ անձանց կազմած գործարար ծրագրերը և տալիս դրական կամ բացասական եզրակացություն և այդ մասին գրավոր տեղեկացնում գործակալություն:

2.6 Զբաղվածության համապատասխան կենտրոն ներկայա ցնելու նպատակով անմրցունակ անձին է տրամադրում դրական եզրակացություն ստացած գործարար ծրագրի մեկ օրինակը և այդ եզրակացությունը,

3. Անմրցունակ անձի գործարար ծրագրով նախատեսված գործունեության փաստացի մեկնարկման պահից սկսած առաջին մեկ տարվա, իսկ **սեզոնային** գործունեության դեպքում տնտեսական գործունեություն իրականացրած 12 ամիսների ընթացքում կազմակերպությունն իրականացնում է ուղեկցման աշխատանքներ, մասնավորապես՝ հարկային պարտավորությունների և այլ պետական վճարների կատարման, բիզնեսի կառավարման և մարքեթինգի վերաբերյալ խորհրդատվություն և կատարված աշխատանքների վերաբերյալ գործակալություն ներկայացնում եռամսյակային հաշվետվություն:

Սույն կետով սահմանված մեկ տարվա՝ այդ թվում **սեզոնային** գործունեության դեպքում, մնացած ամիսների համար ծառայությունների մատուցումը կշարունակվի 2020 թ-ին հաջորդող տարիներին այն դեպքում, երբ համապատասխան տարիների համար այդ նպատակով ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցներ կնախատեսվեն և դրա հիման վրա կողմերի միջև կկնքվի համապատասխան համաձայնագիր:

4. Կազմակերպությունն ամսական պարբերականությամբ հաշվետվություններ է ներկայացնում գործակալություն իր կողմից մատուցված ծառայությունների և տեխնիկական առաջադրանքի 2.5 կետով նախատեսված եզրակացությունների վերաբերյալ:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական	«Աութսորս» ՍՊԸ
հարցերի նախարարություն,	ք.Երևան,Սարմենի 1, 2/1
ք. Երևան, Կառավարական տուն 3,	ՀՎՀՀ 02639627
ՀՎՀՀ՝ 02536701	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 163007079839
Հ/Հ՝ 900011024990	Գլխավոր տնօրեն՝
Գլխավոր քարտուղարի	Ա.Սարգսյան
պարտականությունները կատարող	
Ս. Մաչյան	
---	---
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2
«09» մարտի 2020թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
«09» մարտի 2020 թ. կնքված
ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՑՈՒՄ, ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
«09» մարտի 2020 ԹՎԱԿԱՆԻ ԿՆՔՎԱԾ
N «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7»
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **« » « » 2020 թ.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ստեփան Մաչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աութսորս» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն՝ Ա.Սարգսյանի, մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ կառավարության 31.10.2019թ. N 1517-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «09» մարտի 2020թ. N «ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.13 կետերը, հաշվի առնելով, որ առկա են Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</u>

1.1 Պայմանագրի 4.1 կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«2020 թվականի համար պայմանագրի գինը կազմում եմ 5138250 (հինգ միլիոն հարյուր երեսունութ հազար երկու հարյուր հիսուն) ՀՀ դրամ»

1.1 Պայմանագրի Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ</u>

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում կնքման պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույն Համաձայնագրի դրույթներին:

3. <u>ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը և Համաձայնագրի Հավելվածները կազմված են երկու էջից: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՎՀՀ՝ 02536701 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ՝ 900011024990 Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ս. Մաչյան	«Աութսորս» ՍՊԸ ք.Երևան,Սարմենի 1, 2/1 ՀՎՀՀ 02639627 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Հ/Հ 163007079839 Գլխավոր տնօրեն՝ Ա.Սարգսյան
----------	----------
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
« » 2020 թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

	Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	80531100/620	Արդյունաբերական ուսուցման ծառայություններ	-	-	450000	3313750	3313750	3313750	4464000	4464000	4464000	5138250	5138250	5138250	5138250

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարություն,
ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՎՀՀ՝ 02536701
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011024990
Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող
Ս. Մաչյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<<Աութսորս>> ՍՊԸ
ք.Երևան,Սարմենի 1, 2/1
ՀՎՀՀ 02639627
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007079839
Գլխավոր տնօրեն՝
Ա.Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԹԻՎ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **ութը հուլիսի 2021 թվական**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղար Հ.Գևորգյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի N 37-Լ հրամանով հաստատված կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և «Աութսորս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող, մյուս կողմից, երկուստեք միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի (խմբագրված 03.02.2021թ. ՀՕ-70-Ն օրենքով), ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշման դրույթները, ինչպես նաև սույն համաձայնագիրը կնքելու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից 2021 թվականի հուլիսի 8-ին տրված թիվ 28565-21 լիազորագիրը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.Կողմերը համաձայնվեցին՝

1.1 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Աութսորս» ՍՊ ընկերության միջև 2020 թվականի մարտի 9-ին կնքված «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության (խորհրդատվություն՝ ուսուցում՝ գործարար ծրագրի մշակում և դրանց իրականացման ուղեկցում) ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 պայմանագրի (այսուհետ՝

Պայմանագիր շրջանակներում Պատվիրատու ճանաչել Միասնական սոցիալական ծառայությանը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, պայմանագրի առարկան, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայության հանձնման և ընդունման կարգը, պայմանագրի գինը, Կողմերի պատասխանատվությունը, անհաղթահարելի ուժի ազդեցությունը, այլ պայմաններ սահմանող դրույթները, թիվ 1 հավելվածը կարագավորող հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	«Աութսորս» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 13	ք. Երևան, Սարմենի 1, 2/1
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02639627
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011556355	Հ/Հ 163007079839
Ծառայության գլխավոր քարտուղար՝	Ընկերության տնօրեն՝
Հ.Գևորգյան	Ա. Սարգսյան
----------	----------
(ստորագրություն, Կ.Տ)	(ստորագրություն, Կ.Տ)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՆՄՐՑՈՒՆԱԿ ԱՆՁԱՆՑ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱՐԿԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ՈՒՍՈՒՑՈՒՄ՝ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԵԿՑՈՒՄ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-Ի ԹԻՎ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 15 հոկտեմբեր **2021 թվական**

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս Միասնական սոցիալական ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Արշակյանի, ով գործում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2021 թվականի մարտի 17-ի N 37-Լ հրամանով հաստատված կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից և «Աութսորս» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող, մյուս կողմից, երկուստեք միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքի (խմբագրված 03.02.2021թ. ՀՕ-70-Ն օրենքով), ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 251-Ն որոշման դրույթները, ինչպես նաև սույն համաձայնագիրը կնքելու համար Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի կողմից 2021 թվականի հուլիսի 8-ին տրված թիվ 28565-21 լիազորագիրը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.Կողմերը համաձայնվեցին՝

1.1 Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Աութսորս» ՍՊ ընկերության միջև 2020 թվականի մարտի 9-ին կնքված «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար աշխատաշուկայում անմրցունակ անձանց ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ աջակցության (խորհրդատվություն՝ ուսուցում՝ գործարար ծրագրի մշակում և դրանց իրականացման ուղեկցում) ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 պայմանագրի (այսուհետ՝

Պայմանագիր) կողմ հանդիսացող Պատվիրատուի թիվ «Հ/Հ 900011556355» հաշվեհամարը փոխարինել «Հ/Հ 900011024990» հաշվեհամարով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, պայմանագրի առարկան, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայության հանձնման և ընդունման կարգը, պայմանագրի գինը, Կողմերի պատասխանատվությունը, անհաղթահարելի ուժի ազդեցությունը, այլ պայմաններ սահմանող դրույթները, թիվ 1 հավելվածը կարագվորող հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	«Աութսորս» ՍՊԸ
Ք. Երևան, Նալբանդյան 13	ք. Երևան, Սարմենի 1, 2/1
ՀՎՀՀ 02505511	ՀՎՀՀ 02639627
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011024990	Հ/Հ 163007079839
Ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Ա. Արշակյան	Ընկերության տնօրեն՝ Ա. Սարգսյան
----------	----------
(ստորագրություն, Կ.Տ)	(ստորագրություն, Կ.Տ)

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

2020թ. մարտի 9-ին կնքված N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 գնման պայմանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին

ք. Երևան «22» «Հոկտեմբեր» 2021թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Ա. Արշակյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աութսորս» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով Կողմերի միջև 09.03.2020թ. կնքված N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ և 7.13-րդ կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի 4.2 կետի «7.15» բառերը փոխարինել «7.13» բառերով:

1.3 Պայմանագրի 4.1 կետը լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«2021 թվականի համար պայմանագրի առավելագույն գինը կազմում է 2000000 (երկու միլիոն) ՀՀ դրամ»

1.4 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների կատարման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է երկու (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Միասնական սոցիալական ծառայություն	« Աութսորս » ՍՊԸ
ՀՎՀՀ 02505511	ք. Երևան, Սարմենի 1, 2/1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 02639627
Հ/Հ 900011024990	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
(ստորագրություն)	Հ/Հ 163007079839
Ա.Տ.	(ստորագրություն)
	Ա.Տ.

Հավելված 1
« 09 » «մարտի» 2020թ. կնքված
N ԱՍՀՆ-ԳՀԾՁԲ-20/7 գնման պայմանագրի հիման վրա
«.....» «մարտ» 2021թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում*												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*ԸՆԴԱՄԵՆԸ*
1	80531100/2	*արդյունաբերական ուսուցման ծառայություններ*							*2000000*	*2000000*	*2000000*	*2000000*	*2000000*	*2000000*	*2000000*

***Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Միասնական սոցիալական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011024990

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
« Աութսորս » ՍՊԸ
ք. Երևան, Սարմենի 1, 2/1
ՀՎՀՀ 02639627
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163007079839

(ստորագրություն)